ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/27» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 10-ը հոկտեմբերի 2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության մթերքի պլանավորման և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա. Նազարյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա. Գրիգորյան:
Բացակայում էր՝ ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության զորային սննդի կազմակերպման և պահեստների ու տեխնիկական միջոցների բաժնի բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Կարապետյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/27» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց բաց մրցույթի ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/27» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին <ԵՍ ԷՄ> ՍՊԸ-ի /կոնսորցիում <ՍՄՕԳՍՈՅՈՒԶ> ՍՊԸ-ի հետ/ համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացության՝ հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում <ԵՍ ԷՄ> ՍՊԸ -ի կողմից ներկայացրած գնային առաջարկից:
Հանձնաժողովը կասեցրել է նիստը և <ԵՍ ԷՄ> ՍՊԸ-ին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված անհամապատասխանությունը: 15.07.2019թ. նիստը շարունակվել է և գնահատող հանձնաժողովն արձանագրեց.
<ԵՍ ԷՄ> ՍՊԸ-ն հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացրել է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ՀՎՍ վարչության սպասարկման թիվ 20 բաժնի կողմից տրված տեղեկանք՝ 2018թ. իրացման շրջանառության ծավալի մասին:
Գնահատող հանձնաժողովը որոշեց քննարկել և հիմք է ընդունել 2018թ. իրացման շրջանառության ծավալի մասին տեղեկանքով տրված տեղեկատվությունը, ըստ որի <ՍՄՕԳՍՈՅՈՒԶ> ՍՊԸ-ի 2018թ. իրացման

շրջանառության ծավալը կազմել է 90 902 120 ՀՀ դրամ, և քանի որ նշված գումարը պակաս չէ մասնակցի գնային առաջարկից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց <ԵՍ ԷՄ> ՍՊԸ –ի կողմից ներկայացրած տվյալները գնահատել բավարար, հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցների առկայություն» որակավորման չափանիշին համապատասխանող:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 15.07.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց <ԵՍ ԷՄ> ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/27» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/27» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/27» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Ա. Նազարյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան